ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2015

# ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

## ԹԵՍՏ 4

Խմբի համարը

Նստարանի համարը

*Հարգելի՛ դիմորդ*

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

**Ցանկանում ենք հաջողություն:**

# Ա մակարդակ

1 Ե՞րբ է հիմնադրվել համաեգիպտական XI հարստությունը.

1) Ք.ա. 2400թ.
2) Ք.ա. 1540 թ.
3) Ք.ա. 2040թ.
4) Ք.ա. 1840թ.

2 Ե՞րբ է Կոստանդիանոս Մեծի կողմից Արևելք տեղափոխվել Հռոմեական կայսրության մայրաքաղաքը.

1) 313թ.
2) 395թ.
3) 330թ.
4) 325թ.

3 Ե՞րբ է ֆրանկների առաջնորդ Քլոդվիգն ընդունել քրիստոնեություն.

1) 486թ.
2) 500թ.
3) 510թ.
4) 496թ.

4 Ե՞րբ են սկսվել Ալբիգոյան պատերազմները.

1) 1206թ.
2) 1212թ
3) 1204թ.
4) 1209թ.

5 Ե՞րբ է Մոսկվայում հրավիրվել առաջին երկրային ժողովը.

1) 1559թ.
2) 1549թ.
3) 1550թ.
4) 1561թ.

6 Ե՞րբ է կազմավորվել Ավստրո-Հունգարիան.

1) 1856թ.
2) 1867թ.
3) 1866թ.
4) 1848թ.

7 **Ե՞րբ է Գերմանիան գրավել Հռենոսյան ապառազմականացված գոտին.**

1) 1937թ.
2) 1939թ.
3) 1936թ.
4) 1938թ.

8 **Ո՞վ էր Եգիպտոսի Հին թագավորության առաջին փարավոնը.**

1) Թութմոս I-ը
2) Մինան
3) Յահմոս I-ը
4) Ջոսերը

9 **Ովքե՞ր էին Միջագետքի հնագույն բնակիչները.**

1) կասիտները
2) խուռիները
3) շումերները
4) կուտիները

10 **Ո՞ր ճակատամարտում է զոհվել կայսեր Վաղեսը.**

1) Պուատիեի
2) Կատալաունյան դաշտի
3) Ադրիանապոլսի
4) Կաննեի

11 **Ինչպե՞ս է կոչվում ամերիկյան սահմանադրության առաջին 10 փոփոխություններն ընդգրկող փաստաթուղթը.**

1) «Իրավունքների մասին օրենքներ»
2) «Համադաշնության հոդվածներ»
3) «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր»
4) «Իրավունքների օրենք»

12 **Ո՞ր գործչի կարծիքով անգլիական սահմանադրական կարգն օրինակելի էր և բխում էր ժողովրդի շահերից.**

1) Ադամ Սմիթի
2) Ռոբերտ Օուենի
3) Էդմոնդ Բյորկի
4) Ջոն Լոկի

13 **Ո՞ր խորհրդաժողովում է դրվել Գերմանիայի դեմ Եվրոպայում երկրորդ ճակատի բացման խնդիրը.**

1) Թեհրանի
2) Յալթայի
3) Լոնդոնի
4) Պոտսդամի

**14** **Ո՞ր պետության նախաձեռնությամբ տեղի ունեցավ Ռեզա խանի գլխավորությամբ ռազմական հեղաշրջումն Իրանում.**

1) ԱՄՆ-ի
2) Ռուսաստանի
3) Ֆրանսիայի
4) Մեծ Բրիտանիայի

**15** **Տալ «բյուրգեր» տերմինի բացատրությունը.**

1) «քահանա»
2) «մանր ավատատեր»
3) «իշխանազն»
4) «հարուստ քաղաքացի»

**16** **Ի՞նչ է Սկուպշչինան.**

1) Մակեդոնիայի բարձրագույն օրենսդիր մարմինը
2) Բուլղարիայի կառավարությունը
3) Սերբիայի բարձրագույն օրենսդիր մարմինը
4) Չեռնոգորիայի Գերագույն դատարանը

**17** **Ասորեստանի տիրակալներին դասավորել ըստ գործունեության հաջորդականության.**

ա. Աշուրնաձիրպալ II
բ. Սալմանասար I
գ. Թիգլաթպալասար III
դ. Թուկուլթի-Նինուրտա I

1) բ, դ, ա, գ
2) գ, ա, դ, բ
3) բ, գ, ա, դ
4) դ, բ, ա, գ

**18** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կարլոս Մեծի թագադրվելը կայսր
բ. Պուատիեի ճակատամարտը ֆրանկական և արաբական զորքերի միջև
գ. Քլոդվիգի կառավարման ավարտը
դ. Լյուդովիկոս Բարեպաշտի կողմից Ֆրանկական կայսրության բաժանումը

1) գ, բ, ա, դ
2) բ, ա, դ, գ
3) գ, ա, դ, բ
4) գ, դ, բ, ա

**19** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Հունգարական հեղափոխության ճնշումը
բ. «Մարդու և քաղաքացու իրավունքների» հռչակագրի ընդունումը Ֆրանսիայի Սահմանադիր ժողովի կողմից
գ. Հռոմի պապի աշխարհիկ իշխանության վերացումը
դ. անգլո-իրանական հակամարտությունը Հերաթի համար

1) դ, բ, ա, գ
2) բ, դ, ա, գ
3) բ, գ, ա, դ
4) գ, ա, դ, բ

**20** **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Խորհրդա-ֆիննական պատերազմը
բ. Յալթայի խորհրդաժողովը
գ. Պոտսդամի խորհրդաժողովը
դ. Նյուրնբերգի դատավարությունը
ե. Թեհրանի խորհրդաժողովը

1) ա, ե, բ, գ, դ
2) դ, ե, գ, բ, ա
3) բ, դ, ա, ե, գ
4) ա, բ, ե, դ, գ

**21** **Ե՞րբ է կոնսուլ ընտրվել Հուլիոս Կեսարը.**

1) Ք.ա. 54թ
2) Ք.ա. 49թ.
3) Ք.ա. 44թ.
4) Ք.ա. 59թ.

**22** **Ե՞րբ է համամոնղոլական համագումարը Թեմուչինին հռչակել ընդհանուր տիրակալ.**

1) 1222թ.
2) 1215թ.
3) 1206թ.
4) 1201թ.

**23** **Ե՞րբ է Տրապիզոնի կայսրությունը նվաճվել թուրք-օսմանների կողմից.**

1) 1461թ.
2) 1453թ.
3) 1472թ.
4) 1389թ.

24 **Ե՞րբ է տեղի ունեցել Բարդուղիմեոսյան գիշերը.**

1) 1572թ. օգոստոսի 24-ին
2) 1562թ. օգոստոսի 24-ին
3) 1594թ. օգոստոսի 24-ին
4) 1590թ. օգոստոսի 24-ին

25 **Ե՞րբ է Եվրոպական համագործակցությունը վերանվանվել Եվրոպական Միություն.**

1) 2006թ.
2) 1993թ.
3) 2002թ.
4) 1995թ.

26 **Ո՞վ է Նոր Բաբելոնյան տերության հիմնադիրը.**

1) Սարգոնը
2) Նաբուգոդոնոսորը
3) Նաբոնիդը
4) Նաբոպալասարը

27 **Բյուզանդական ո՞ր կայսրը նվաճեց Բուլղարական թագավորությունը.**

1) Ալեքսիոս I-ը
2) Բարսեղ(Վասիլ) I-ը
3) Բարսեղ(Վասիլ) II-ը
4) Ռոմանոս IV Դիոգենեսը

28 **Ե՞րբ է առաջին անգամ գումարվել Խաղաղության համաշխարհային համաժողովը.**

1) 1891թ.
2) 1843թ.
3) 1863թ.
4) 1878 թ.

29 **Որտե՞ղ է ստորագրվել Հյուսիսատլանտյան դաշինքի (ՆԱՏՕ) ստեղծման պայմանագիրը.**

1) Ֆուլտոնում
2) Նյու Յորքում
3) Բրյուսելում
4) Վաշինգտոնում

30 **Ի՞նչ անունով է հայտնի 2005թ. հեղափոխությունը Ղրղզստանում.**

1) «Նարնջագույն հեղափոխություն»
2) «Վարդերի հեղափոխություն»
3) «Մեխակների հեղափոխություն»
4) «Կակաչների հեղափոխություն»

31 **Ո՞րն է Ամենհոտեպ IV փարավոնի կողմից ձեռնարկված բարեփոխումների գլխավոր հետևանքը.**

1) Վերսկսվեցին արտաքին նվաճումները, պետության սահմանները խիստ ընդարձակվեցին:
2) Խիստ կրճատվեցին հիքսոսների ազնվականության իրավունքները:
3) Սահմանափակվեցին Ամոնի տաճարի քրմության իշխանությունն ու ազդեցությունը:
4) Վերամիավորվեցին Վերին և Ներքին Եգիպտոսները:

32 **Ո՞րն է 843թ. Վերդենի դաշնագրի գլխավոր հետևանքը.**

1) Ֆրանկական տերությունը բաժանվեց երեք մասի:
2) Ձևավորվեց Գերմանական(Տևտոնական) թագավորությունը:
3) Արաբները վերջնականապես հեռացան Հարավային Գալլիայից:
4) Ֆրանկական տերությանը միացվեցին Հյուսիսային Իտալիան և Բուրգունդիան:

33 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա–կանությամբ.**

ա. Պերիկլեսի պաշտոնավարման սկիզբը
բ. Աթենական պետության ժողովրդավարացման սկիզբը
գ. Եգիպտոսի նվաճումն Ալեքսանդր Մակեդոնացու կողմից
դ. Աթենական նավատորմի արշավանքը Սիցիլիա

1) ա, բ, դ, գ
2) բ, ա, դ, գ
3) գ, ա, բ, դ
4) դ, գ, բ, ա

34 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա-կանությամբ.**

ա. Ուոթրգեյթյան գործը
բ. Վարշավայի պայմանագրի կնքումը
գ. Ռուսաստանի պետական սուվերենության մասին հռչակագրի ընդունումը
դ. Հանրապետության օգտին անցկացված հանրաքվեն Իտալիայում
ե. Ջ. Քենեդու սպանությունը

1) դ, բ, ե, ա, գ
2) բ, ա, դ, գ, ե
3) ա, ե, գ, բ, դ
4) գ, ե, ա, բ, դ

35 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Մարդն ամբողջովին պետք է ենթարկվի պետությանը, քանի որ մարդկային և հոգևոր ամեն ինչ կորցնում է իր արժեքը պետությունից դուրս»:**

1) Օ. Ֆոն Բիսմարկը
2) Բ. Մուսսոլինին
3) Ա. Հիտլերը
4) Ջ. Ջենտիլեն

36 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Մենք հետ ենք մնացել առաջատար երկրներից 50-100 տարով: Մենք պետք է այդ հեռավորությունը վազելով անցնենք տասը տարում»:**

1) Ի. Ստալինը
2) Ն. Խրուշչովը
3) Լ. Բրեժնևը
4) Վ. Լենինը

37 **Համապատասխանեցնել Հռոմի կայսրերին իրենց կառավարման տարեթվերի հետ.**

| | |
|---|---|
| 1. Կլավդիոս | ա. 98-117թթ. |
| 2. Տրայանոս | բ. 284-305թթ. |
| 3. Տիբերիոս | գ. 41-54թթ. |
| 4. Մարկոս Ավրելիոս | դ. 14-37թթ. |
| | ե. 161-180թթ. |

1) 1-ա, 2-դ, 3- բ, 4-գ
2) 1-ե, 2-գ, 3-բ, 4-դ
3) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ
4) 1-գ, 2-ա, 3-դ, 4-ե

38 **Կատարել համապատասխանեցում.**

| | |
|---|---|
| 1. խաչակրաց երրորդ արշավանքի ավարտը | ա. 1144թ. |
| 2. արևելքում խաչակիրների վերջին հենակետի անկումը | բ. 1204թ. |
| 3. Եդեսիայի գրավումը Մոսուլի կառավարիչ Զանգիի կողմից | գ. 1192թ. |
| 4. Կոստանդնուպոլսի գրավումը խաչակիրների կողմից | դ. 1268թ. |
| | ե. 1291թ. |

1) 1-գ, 2-ե, 3-ա, 4-բ
2) 1-դ, 2-ա, 3-բ, 4-ե
3) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
4) 1-ե, 2-գ, 3-ա, 4-բ

39 **Ո՞վ է կայսր հռչակվել 395թ Հռոմեական կայսրության արևմտյան մասում.**

1) Օդոակրը
2) Թեոդոսիոս II-ը
3) Հոնորիոսը
4) Արկադիոսը

40 **Ու՞մ կողմից է շրջանառության մեջ դրվել «Նոր աշխարհակարգ» հասկացությունը.**

1) Ռոնալդ Ռեյգանի
2) Բիլ Քլինթոնի
3) Ջորջ Բուշ Կրտսերի
4) Ջորջ Բուշ Ավագի

41 **Ո՞րն է ԱՄՆ-ում քաղաքացիական պատերազմի բռնկման գլխավոր պատճառը.**

1) Ժողովրդավարական և Հանրապետական կուսակցությունների միջև առկա լուրջ հակամարտությունը:
2) Իսպանախոս բնակչության ձգտումները վերամիավորվելու Մեքսիկային:
3) Ստրկության պահպանումը հարավային նահանգներում:
4) Անգլիական գերիշխանությունը վերականգնելու կողմնակիցների շարժումը:

42 **Ի՞նչ հետևանք ունեցավ 1939թ. օգոստոսի 23-ին կնքված խորհրդա-գերմանական չհարձակման համաձայնագիրը.**

1) Ֆինլանդիան միացվեց ԽՍՀՄ-ին:
2) Սկսվեց Երկրորդ աշխարհամարտը:
3) Որպես ինքնուրույն պետություն Ավստրիան դադարեց գոյություն ունենալ:
4) Չեխոսլովակիայի մի շարք շրջաններ տրվեցին Գերմանիային, Հունգարիային և Լեհաստանին:

43 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Կյուրոսի ներխուժումը Բաբելոնիա
բ. Սարգոն II-ի կողմից Սամարիայի գրավումը
գ. Ստորին Եգիպտոսի նվաճումը Կամբիզի կողմից
դ. Քաղդեացի Նաբոպալասարի թագադրվելը Բաբելոնիայի արքա

1) դ, բ, գ, ա
2) գ, ա, բ, դ
3) բ, ա, դ, գ
4) բ, դ, ա, գ

44 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա–կանությամբ.**

ա. Բրուսան օսմանյան պետության մայրաքաղաք հռչակումը
բ. կայսր Կարլոս V-ի կողմից Ռայխստագի հրավիրումը Վորմսում
գ. պորտուգալացի ծովագնացների կողմից Բարեհուսո հրվանդանին հասնելը
դ. Սեֆյանների պետության ստեղծումը

1) ա, գ, դ, բ
2) բ, ա, դ, գ
3) ա, դ, բ, գ
4) դ, գ, բ, ա

45 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա–կանությամբ.**

ա. Վարշավյան դաշինքի անդամ երկրների ներխուժումը Չեխոսլովակիա:
բ. «Վարդերի հեղափոխությունը» Վրաստանում:
գ. Հարավսլավիայի դեմ ՆԱՏՕ-ի կողմից ռազմական գործողությունների իրականացումը:
դ. Հելսինկիում եզրափակիչ ակտի 10 հիմնական սկզբունքների ընդունումը:
ե. ՄԱԿ-ի կողմից «Ցեղասպանության հանցագործության կանխարգելման և դրա համար պատժի մասին» կոնվենցիայի ընդունումը:

1) ե, ա, դ, գ, բ
2) գ, դ, ե, ա, բ
3) բ, գ, ա, ե, դ
4) ա, գ, բ, դ, ե

46 **Կատարել համապատասխանեցում.**

| | |
|---|---|
| 1. Լիսիմաքոս | ա. Եգիպտոս |
| 2. Անտիպատրոս | բ. Փոքր Ասիա |
| 3. Պտղոմեոս | գ. Բաբելոնիա |
| 4. Էվմենես | դ. Մակեդոնիա |
| | ե. Թրակիա |

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-ա
2) 1-բ, 2-ա, 3-ե, 4-դ
3) 1-դ, 2-ե, 3-գ, 4-բ
4) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ

47 **Կատարել համապատասխանեցում.**

| | |
|---|---|
| 1. անգլիական խորհրդարանի հրավիրումը Սիմոն դը Մոնֆորի կողմից | ա.1461թ. |
| | բ. 1265թ. |
| 2. Թավրիզի գրավումը շահ Իսմայիլի կողմից | գ. 1402թ. |
| 3. Տրապիզոնի կայսրության նվաճումը թուրքերի կողմից | դ. 1502թ. |
| | ե. 1352թ. |
| 4. օսմանյան զորքերի ջախջախումը Լենկ Թեմուրի կողմից | |

1) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ե
2) 1-ե, 2-ա, 3-բ, 4-դ
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-գ
4) 1-դ, 2-բ, 3-գ, 4-ե

48 **Կատարել համապատասխանեցում.**

1. Ֆ. Վոլտեր
2. Դ. Հյում
3. Ֆ. Շիլլեր
4. Գրոտիուս
5. Պ. Վերրի

ա. Անգլիա
բ. Գերմանիա
գ. Հոլանդիա
դ. Ֆրանսիա
ե. Շվեդիա
զ. Իտալիա

1) 1-ե, 2-դ, 3-գ, 4-ա, 5-բ
2) 1-գ, 2-ե, 3-ա, 4-դ, 5-բ
3) 1-բ, 2-գ, 3-ե, 4-զ, 5-դ
4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ, 5-զ

49 **Կատարել համապատասխանեցում.**

1. Երկրորդ հանրապետությունը Ֆրանսիայում
2. Թանզիմաթի ժամանակաշրջանը Օսմանյան կայսրությունում
3. Դիրեկտորիայի կառավարման ժամանակաշրջանը Ֆրանսիայում
4. Առաջին կայսրությունը Ֆրանսիայում

ա. 1839-1876թթ.
բ. 1848-1852թթ.
գ. 1804-1814թթ.
դ. 1795-1799թթ.
ե. 1852-1870թթ.

1) 1-գ, 2-բ, 3-ա, 4-դ
2) 1-բ, 2-ա, 3-դ, 4-գ
3) 1-ե, 2-դ, 3-ա, 4-բ
4) 1-բ, 2-ե, 3-դ, 4-գ

50 **Պատմական գործիչների անունները համապատասխանեցնել կառավարման տարեթվերի հետ.**

1. Ռ. Նիքսոն
2. Ժ. Շիրակ
3. Բ. Ելցին
4. Ֆ. Ռուզվելտ
5. Վ. Պուտին

ա. 1990-1998թթ.
բ. 1933-1945թթ.
գ. 2000-2008թթ.
դ. 1991-1999թթ.
ե. 1995-2007թթ.
զ. 1969-1974թթ.

1) 1-ա, 2-ե, 3-դ, 4-զ, 5-բ
2) 1-զ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-բ
3) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-զ
4) 1-զ, 2-ե, 3-դ, 4-բ, 5-գ

## Բ մակարդակ

51 **Նշված պնդումներից որ՞ն է ճիշտ.**

1) Աթենքի «Երկար պարիսպները» կառուցել է Թեմիստոկլեսը՝ պաշտպանելու համար քաղաքը պարսկական նավատորմի հարձակումներից:
2) Հունական գաղութացումը սկսվել է Ք. ա. IX դարում:
3) Սպարտայում իրական իշխանությունը գտնվում էր 30 հոգուց կազմված ավագների խորհրդի ձեռքում:
4) Ճակատամարտը Միկալե հրվանդանի մոտ տեղի է ունեցել 480 թվականին:

52 **Նշված պնդումներից որ՞ն է ճիշտ.**

1) «Երգ իմ Սիդի մասին» միջնադարյան վիպերգը նվիրվում է Դանիայի թագավոր Բեովուլֆին:
2) Ազատ արվեստները Եռյակ և Քառյակ մասերի են բաժանել VIդ. կրթական գործի կազմակերպիչներ Բոեցիոսն ու Կասիոդորը:
3) 12 գրքից բաղկացած «Գոթերի պատմության» հեղինակն է Յորդանը:
4) Կարլոս Մեծի 778թ. Իսպանիա կատարած անհաջող արշավանքին է նվիրվում «Երգ Նիբելունգների մասին» վիպերգը:

53 **Նշված պնդումներից ո՞րն է սխալ.**

1) Իրանում ծավալված սահմանադրական շարժման պարտության գլխավոր պատճառը 1911թ. Հյուսիսային Իրանի գրավումն էր ռուսական զորքերի կողմից:
2) Արևելյան հարցն Օսմանյան կայսրության հպատակ քրիստոնյա ժողովուրդների ազատագրման խնդիրն է, որը նոր ժամանակների միջազգային հարաբերություն–ների կարևորագույն հարցերից մեկն է:
3) 1853թ. ծագած Արևելյան(Ղրիմի) պատերազմում Օսմանյակ կայսրության հերթական պարտության հետևանքով Բուլղարիան վերականգնեց անկախությունը:
4) Նոր ժամանակների սկիզբն Իրանում համընկնում է Ղաջարների հարստության հաստատման հետ, որը շարունակվեց շուրջ 130 տարի:

54 **Ի՞նչ է «բուլեն».**

1) օրենքների նախագծեր քննարկող խորհուրդ Հին Աթենքում
2) ավագների խորհուրդ Հին Աթենքում
3) գերագույն օրենսդիր մարմին Հին Հռոմում
4) Ժողովրդական ժողով Հին Հռոմում

55 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. բենեֆիցիում
2. մայորդոմ
3. ինկվիզիցիա
4. խորհրդարան

ա. դասային ներկայացուցչական մարմին միջնադարյան Անգլիայում
բ. ծառայությունների դիմաց ցմահ տրվող կալվածք
գ. նախապես՝ թագավորական կալվածքների կառավարիչ Ֆրանկական պետությունում
դ. հերետիկոսական գաղափարների հավատաքննության դատարան
ե. դասային ներկայացուցչական մարմին միջնադարյան Ֆրանսիայում

1) 1-գ, 2-ա, 3-ե, 4-բ
2) 1-ե, 2-դ, 3-բ, 4-գ
3) 1-բ, 2-ե, 3-ա, 4-դ
4) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա

56 **Գտնել հասկացությունների համապատասխան բացատրությունները.**

1. պրոտեկտորատ
2. ռայխստագ
3. շովինիզմ
4. «նոր ազատություն»
5. նարոդնիկներ

ա. Խոշոր տերությունների կողմից հպատակ ազգերի ձուլմանը միտված հետադիմական քաղաքականություն:
բ. ԱՄՆ-ի նախագահ Թ. Ռուզվելտի բարեփոխումների ծրագիրը:
գ. Միապետականների դեմ ուղղված և բարեփոխումները պաշտպանող կառավարման հատուկ ձև Անգլիայում:
դ. Գյուղացիական հեղափոխության հետևորդներ Ռուսաստանում, որոնք կազմակերպել են «երթ դեպի ժողովուրդ»:
ե. ԱՄՆ-ի նախագահ Վ. Վիլսոնի բարեփոխումների ծրագիրը:
զ. Բարձրագույն օրենսդիր ատյան կայսերական Գերմանիայում:

1) 1-գ, 2-դ, 3-ե, 4-բ, 5-ա
2) 1-զ, 2-գ, 3-դ, 4-ա, 5-բ
3) 1-գ, 2-զ, 3-ա, 4-ե, 5-դ
4) 1-դ, 2-գ, 3-զ, 4-ա, 5-ե

57 **Նշված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են Պելոպոնեսյան պատերազմների հետևանք.**

ա. Ցրվեց Աթենական ծովային միությունը, որի նավատորմը հանձնվեց Սպարտային:
բ. Սպարտան և նրա պելոպոնեսյան դաշնակիցները պարտություն կրեցին, իսկ ողջ Հունաստանը միավորվեց Աթենքի շուրջ:
գ. Աթենքն ընդունեց Սպարտայի գերիշխանությունը:
դ. Աթենքն իր տիրապետությունը հաստատեց Մակեդոնիայի վրա:
ե. Օգտվելով հունական պոլիսների ծանր վիճակից, Աքեմենյան Պարսկաստանը վերականգնեց գերիշխանությունը Փոքր Ասիայում:

1) գ, դ, ե
2) ա, գ, ե
3) ա, գ, դ
4) բ, դ, ե

58 **Նշված փաստարկներից ընտրել 3-ը, որոնք հանդիսանում են Եվրոպայում բացարձակ միապետության առաջացման հիմնական պատճառ.**

ա. Ազնվականությունը որպես ռազմաքաղաքական խավ կորցրեց իր նախկին դերը՝ կախման մեջ ընկնելով միապետից:
բ. Առաջացան և որպես ինքնավար միավորներ հանդես եկան միջնադարյան քաղաքները:
գ. Իսլամական աշխարհից Եվրոպային մշտապես վտանգ էր սպառնում:
դ. Եկեղեցու ենթարկումը պետությանը, Ռեֆորմացիան և աշխարհիկ մտավորական խավի առաջացումը միապետից կախման մեջ դրին հոգևորականությանը:
ե. Միապետի շուրջ համախմբվեցին առևտրականներն ու արդյունաբերողները, որոնք ամենից շատ էին զգում պետության հովանավորության կարիքը:
զ. Ստեղծվել էր անհրաժեշտություն՝ կանխարգելու պետության կառավարման կենտրոնացումը մի խումբ մարդկանց ձեռքում:

1) գ, ե, զ
2) բ, գ, զ
3) ա, գ, դ
4) ա, դ, ե

59 **Որո՞նք են Ռուսաստանում XIXդ. վերջին- XXդ. սկզբին ծագած քաղաքակրթական ճգնաժամի գլխավոր պատճառները.**

ա. Կայսրության տարածքային կորուստները Հեռավոր Արևելքում և Սիբիրում:
բ. Պետության ավանդական կառույցների և հասարակությունում գերիշխող պահպանողականների առկայությունը:
գ. Ինքնակալության տապալումը և սոցիալիստական հասարակարգի հաստատումը Ռուսաստանում:
դ. Ինքնակալության կողմից կայսրության ենթակա ժողովուրդների ազգայնական շարժման ճնշումը:
ե. Երկրում գործող ազատական շարժման հալածանքները:
զ. Ցարիզմի վարած ինքնամեկուսացման քաղաքականությունը:

1) ա, դ, զ
2) ա, գ, զ
3) բ, դ, ե
4) գ, դ, ե

60 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա–կանությամբ.**

ա. Փարավոն Ամենհոտեպ IV-ի (Էխնաթոն) կրոնական բարեփոխումները
բ. Եգիպտոսի Հին թագավորության անկումը
գ. Միացյալ Եգիպտոսի ստեղծումը Մինայի կողմից
դ. Եգիպտոսի ենթարկվելը Քուշի գերիշխանությանը
ե. Փարավոն Ջոսերի կառավարումը

1) գ, ե, բ, ա, դ
2) ե, գ, բ, դ, ա
3) բ, ա, դ, ե, գ
4) դ, ա, գ, բ, ե

61 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդա–կանությամբ.**

ա. Ռուսիայի նվաճումը մոնղոլների կողմից
բ. Ոսկե Հորդայի տիրապետության տապալումը Ռուսական պետությունում
գ. Յարոսլավ Իմաստունի մահը
դ. Երկրային ժողովի կողմից Միխայիլ Ռոմանովի ցար ընտրվելը
ե. Իվան IV Ահեղի թագադրությունը

1) դ, բ, ա, ե, գ
2) բ, ա, գ, դ, ե
3) գ, ա, բ, ե, դ
4) ա, դ, ե, գ, բ,

62 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Առաջին 10-ը փոփոխությունները ԱՄՆ-ի Սահմանադրության մեջ
բ. հանրապետության հռչակումը Անգլիայում
գ. Պետրոս (Պյոտր) Մեծի կողմից կայսեր տիտղոսի ընդունումը
դ. Վիեննայի վեհաժողովը
ե. Ռուսաստանի 50 նահանգների ստեղծման մասին Եկատերինա II-ի օրենքը
զ. Ավստրիայի պարտությունը Պրուսիայի դեմ պատերազմում
է. Գերմանական ազգի Սրբազան հռոմեական կայսրության լուծարումը Նապոլեոն I-ի կողմից
ը. Օտտո Բիսմարկի նշանակվելը Պրուսիայի առաջին նախարար
թ. Հռոմի հռչակվելը Իտալիայի մայրաքաղաք
ժ. Բուրբոնների տիրապետության դեմ ֆրանսիական հեղափոխությունը

1) թ, գ, ա, դ, ե, բ, ժ, ը, զ, է
2) ա, դ, գ, բ, ը, զ, ե, ժ, թ, է
3) դ, ա, գ, ե, բ, է, ը, զ, ժ, թ
4) բ, գ, ե, ա, է, դ, ժ, ը, զ, թ

63 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը.«Քաղաքականությունը նույնքան գրավիչ է, որքան պատերազմը: Պատերազմում քեզ կարող են սպանել մեկ անգամ, իսկ քաղաքականության մեջ՝ բազմիցս»:**

1) Ա. Հիտլեր
2) Ու. Չերչիլ
3) Վ. Վիլսոն
4) Ֆ. Ռուզվելտ

64 **Ո՞վ է հետևյալ խոսքերի հեղինակը. «Եթե ձեր հարևանը փոխում է պաստառները, ապա դա չի նշանակում, որ դուք էլ պարտադիր կերպով ձեր տանը պետք է վերանորոգում սկսեք»:**

1) Ի. Բրոզ Տիտո
2) Ն. Սարկոզի
3) Է. Հոնեկեր
4) Ս. Բեռլուսկոնի

65 **Կատարել համապատասխանեցում.**

| | |
|---|---|
| 1. Ապոլոն | ա. Աստվածների հայր |
| 2. Ան | բ. Ծովերի աստված |
| 3. Պոսեյդոն | գ. Արևի և արվեստների աստված |
| 4. Իսիդա | դ. Նախաստեղծ-արարիչ աստված |
| 5. Ատում | ե. Սիրո և մայրության աստվածուհի |
| | զ. Երկրի աստվածություն |

1) 1-զ, 2-բ, 3-դ, 4-գ, 5-ե
2) 1-բ, 2-դ, 3-ա, 4-զ, 5-գ
3) 1-դ, 2-գ, 3-ե, 4-բ, 5-ա
4) 1-գ, 2-ա, 3-բ, 4-ե, 5-դ

66 **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Վայրը | # | Տարեթիվը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Քրիստոնեական եկեղեցու պառակտումը | 1. | Վերդեն | 1. | 1613 թ. |
| 2. | Բարդուղիմեոսյան գիշերը | 2. | Մոսկվա | 2. | 843 թ. |
| 3. | Եպիսկոպոսների և վանահայրերի ընտրության կարգի սահմանման մասին համաձայնագիրը | 3. | Փարիզ | 3. | 1054 թ. |
| 4. | Լյուդովիկոս Բարեպաշտի որդիների միջև դաշնագրի կնքումը | 4. | Կոստանդնուպոլիս | 4. | 1572 թ. |
| 5. | Ռոմանովների արքայատան հաստատումը | 5. | Վորմս | 5. | 1122 թ. |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 5 |
| 2 | 5 | 1 |
| 3 | 4 | 3 |
| 4 | 3 | 4 |
| 5 | 1 | 2 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 5 | 5 |
| 4 | 1 | 2 |
| 5 | 2 | 1 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 1 |
| 2 | 4 | 5 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 5 | 2 |
| 5 | 1 | 3 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 3 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 5 | 5 |
| 5 | 2 | 1 |

67 **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք վերաբերում են «Պերիկլեսյան ոսկեդարին».**

ա. Մտցվեց օստրակիզմի համակարգը, որով պետության համար վտանգավոր քաղաքացիները վտարվում էին Աթենքից 10 տարի ժամկետով:
բ. Պաշտոնյաներն աշխատավարձ էին ստանում, իսկ չունևոր աթենացիներին տոներին դրամ էին բաժանում՝ հաճախելու թատրոն:
գ. Ստեղծվեց 10 Ստրատեգոսների խորհուրդ, որոնցից յուրաքանչյուրը հերթով ղեկավարում էր աթենական աշխարհազորը:
դ. Պաշտոնյաները հաճախ նշանակվում էին ոչ թե քվեարկությամբ, այլ վիճակահանությամբ:
ե. Յուրաքանչյուր ազատ աթենացի իրավունք ուներ բողոքարկելու էկլեսիայի կողմից ընդունված նախկին օրենքը:
զ. Հիմնվեց էֆորների հաստատությունը, որին տրված էին գերագույն վերահսկիչ գործառույթներ:
է. Ավարտվեց «Երկար պարիսպների» կառուցումը, որով Աթենքը թշնամու հարձակման ժամանակ հուսալիորեն կպաշտպանվեր:

1) ա, գ, ե, է
2) ա, գ, դ, զ
3) բ, դ, ե, է
4) բ, գ, զ, է

68 **Նշված փաստերից ընտրել 4-ը, որոնք վերաբերում են Մարտին Լյութերի տեսակետներին.**

ա. Հռոմի պապը մեղքերին թողություն տալու իրավունք չունի, քանի որ դրանք պետք է քավել ոչ թե թուղթ գրելով, այլ տանջանքներով:
բ. Հռոմի պապի գերագահությունը պետք է տարածվի ոչ միայն հոգևոր, այլև աշխարհիկ իշխանությունների վրա:
գ. Հռոմի պապը չպիտի խառնվի աշխարհիկ իշխանության գործերին, իսկ եկեղեցին պետք է ենթարկվի պետությանը:
դ. Հավատքի միակ աղբյուրն Աստվածաշունչն է:
ե. Սուրբ Գիրքը պետք է կարդան և մեկնաբանեն միայն կաթոլիկ հոգևորականները:
զ. Աստվածաշնչում տեղ գտած սկզբունքներին հետևող հավատացյալները կարող են հասնել փրկության առանց եկեղեցու միջնորդության:
է. Աստվածաշնչի դրույթներին հավասար հավատքի աղբյուր են հանդիսանում նաև տիեզերական ժողովների կանոնները և պապերի որոշումները:

1) գ, դ, ե, է
2) ա, գ, դ, զ
3) բ, դ, ե, է
4) ա, բ, դ, զ

69 **Բերված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք տեղ են գտել ԱՄՆ-ի նախագահ Հ. Թրումանի 1947թ. Կոնգրեսին հղած ուղերձում.**

ա. Մեծածավալ տնտեսական օգնություն տրամադրել եվրոպական երկրներին:
բ. Ստեղծել արևմտյան երկրների ռազմաքաղաքական խմբավորում՝ ԱՄՆ-ի հովանու ներքո:
գ. ԽՍՀՄ-ի դեմ օգտագործել ատոմային զենքի սպառնալիք, նույնիսկ՝ կիրառել այն:
դ. ԽՍՀՄ-ի սահմանագծի երկայնքով տեղակայել ամերիկյան ռազմակայաններ:
ե. Միավորել ամբողջ անգլոսաքսոնական աշխարհի ուժերը:
զ. Անհրաժեշտության դեպքում ԽՍՀՄ-ի և նրա դաշնակիցների դեմ կիրառել զինված ուժեր:
է. Եվրոպայի վրա իջել է երկաթե վարագույրը, իսկ Արևելյան և Կենտրոնական Եվրոպայի պետություններն ու ժողովուրդները ընկել են «Մոսկվայի վերահսկողության տակ»:

1) գ, դ, ե, զ
2) ա, գ, դ, է
3) բ, դ, ե, է
4) ա, բ, դ, զ

70 **Տալ նշված տերմինների բացատրությունը.**

1. ագորա
2. թերմ
3. ակրոպոլիս
4. աքվեդուկ
5. բազիլիկ

ա. ջրանցույց
բ. հասարակական և առևտրական կենտրոն
գ. եռամաս երկայնավուն սրահ
դ. միջնաբերդ-սրբավայր
ե. հասարակական բաղնիք
զ. հաղթակամար

1) 1-զ, 2-ա, 3-դ, 4-ե, 5-բ
2) 1-ա, 2-դ, 3-ե, 4-գ, 5-զ
3) 1-բ, 2-ե, 3-դ, 4-ա, 5-գ
4) 1-ե, 2-բ, 3-գ, 4-զ, 5-դ

71 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. իմպրեսիոնիզմ
2. նատուրալիզմ
3. ռեալիզմ
4. կլասիցիզմ
5. ավանգարդիզմ

ա. Իրական կյանքի նույնական, լուսանկարչական ճշգրտությամբ արտացոլում:
բ. Գույների անսովոր համադրմամբ ակնթարթային տպավորության գեղեցկության պատկերում:
գ. Կյանքի ճշմարտացի պատկերում, գնահատում և մեկնաբանում:
դ. Գեղեցիկն անփոփոխ է և հավիտենական, ինչպես բնությունը:
ե. Նորագույն շրջանի արվեստի ուղղության պայմանական անվանում:
զ. Իրականի և ոչ-իրականի միավորում:

1) 1-բ, 2-ա, 3-գ, 4-դ, 5-ե
2) 1-դ, 2-բ, 3-զ, 4-գ, 5-ա
3) 1-բ, 2-դ, 3-ա, 4-ե, 5-գ
4) 1-զ, 2-բ, 3-դ, 4-ա, 5-ե

72 **Տերմինները համապատասխանեցնել իրենց բովանդակությանը.**

1. ինքնիշխանություն
2. գերիշխանություն
3. բռնապետություն
4. ամբողջատիրություն
5. միասնացում

ա. տնտեսական կյանքի միջազգայնացման, միասնականացման նոր, բարձրագույն ձև
բ. պետության անկախ, ինքնուրույն լինելը ներքին և արտաքին գործերում
գ. բռնապետական իշխանության ձև
դ. քաղաքական համակարգ, որին բնորոշ են կառավարման ոչ ժողովրդավարական մեթոդները
ե. որևէ պետության, քաղաքական ուժի կամ միության ղեկավար, գերիշխող դերը մյուսների նկատմամբ
զ. արդի աշխարհի ամբողջական, համակարգված միասնականացման գործընթաց

1) 1-ա, 2-զ, 3-ե, 4-դ, 5-բ
2) 1-բ, 2-ե, 3-գ, 4-ա, 5-զ
3) 1-դ, 2-զ, 3-ե, 4-գ, 5-բ
4) 1-բ, 2-ե, 3-դ, 4-գ, 5-ա

73 **Նշված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են Կլիսթենեսի բարեփոխումների հետևանք.**

ա. Ատտիկայի տարածքում նոր վարչաբաժանման հետևանքով խիստ սահմանափակվեց էվպատրիդների ազդեցությունը:
բ. Ատտիկայի բնակչությունը բաժանվեց չորս գույքային խմբի:
գ. Պետության կառավարման գործում մեծացավ ավագների խորհրդի (արեոպագոսի) դերը:
դ. Ձևավորվեց 500-ի խորհուրդ, որի շնորհիվ բարելավվեց օրենսդիր մարմինների գործունեությունը:
ե. Ստեղծվեց Ժողովրդական ժողովի կողմից ընտրվող 400-ի խորհուրդ (բուլե):
զ. Ստեղծվեց 10 ստրատեգոսների խորհուրդ, որոցից յուրաքանչյուրը հերթով ղեկավարում էր աթենական աշխարհազորը:
է. Մտցվեց օստրակիզմը, որի միջոցով 10 տարի ժամկետով Աթենքից վտարվում էին պետության համար վտանգավոր անձինք:
ը. Վերացվեց պարտային ստրկությունը, իսկ Ատտիկայից դուրս ստրկության վաճառված աթենացիները վերադարձվեցին պետության հաշվին:

1) գ, ե, զ, է
2) ա, դ, զ, է
3) բ, ե, է, ը
4) ա, գ, դ, ը

74 **Բերված փաստարկներից ընտրել 4-ը, որոնք հանդիսանում են Վաշինգտոնյան խորհրդաժողովի հետևանքներ.**

ա. Հեռավոր Արևելքում և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում հաստատվում էր կայունություն:
բ. Համաձայնեցվում էին հինգ առաջատար երկրների վերջրյա ծովային նավատորմների չափաբաժինները:
գ. Ի հաշիվ Գերմանիայի՝ տարածքային շոշափելի ձեռքբերումներ էր ունենում Լեհաստանը:
դ. Վերացվում էին առանձին երկրների ազդեցության գոտիները Չինաստանում:
ե. Չինաստանում հռչակվում էր մեծ տերությունների համար «բաց դռների» և «հավասար հնարավորությունների» սկզբունքը:
զ. Ճապոնիայի ռազմա-ծովային ուժերը կրկնապատկվում էին ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի համեմատությամբ:
է. Չինաստանը կորցնում էր իր ինքնիշխանությունը, իսկ տարածքը մասնատվում էր:

1) ա, բ, դ, ե
2) բ, գ, զ, է
3) ա, դ, ե, զ
4) ա, բ, դ, զ

75 **Պատմական գործիչներին դասավորել ըստ նրանց գործունեության հաջորդականության.**

ա. Կալիաս
բ. Կլիսթենես
գ. Նաբուգոդոնոսոր II
դ. Դեմոսթենես
ե. Պերսևս
զ. Թեմիստոկլես
է. Սելևկոս
ը. Փիլիպոս II
թ. Անտիոքոս III
ժ. Դարեհ III

1) ա, ե, գ, բ, զ, դ, թ, ժ, ը, է
2) դ, գ, ժ, ա, բ, ե, թ, է, զ, ը
3) գ, բ, զ, ա, դ, ը, ժ, է, թ, ե
4) գ, ա, բ, զ, ը, դ, է, ժ, ե, թ

76 **Պատմական իրադարձությունները դասավորել ժամանակագրական հաջորդականությամբ.**

ա. Դ. Էյզենհաուերի կողմից «վիուկների որսի» դադարեցումը ԱՄՆ-ում
բ. Շարլ դը Գոլի հեռանալը քաղաքական ասպարեզից
գ. Հարաբերությունների վերականգնումը ԽՍՀՄ-ի և Հարավսլավիայի միջև
դ. Ալժիրում սպայության կողմից խռովության բարձրացումը
ե. երկրորդ անգամ վարչապետի պաշտոնի ստանձնումը Մ. Թեթչերի կողմից
զ. ԳԺՀ-ի և ԳԴՀ-ի միացումը
է. Կարիբյան ճգնաժամը
ը. Ֆոլկլենդյան պատերազմը
թ. Բեռլինի պատի կառուցումը
ժ. ՄԱԿ-ի Միջազգային դատարանի ստեղծումը

1) ը, ե, զ, բ, է, ժ, դ, ա, գ, թ
2) ե, զ, ժ, է, բ, ա, ը, դ, թ, գ
3) ժ, ա, գ, դ, թ, է, բ, ը, ե, զ
4) ա, ժ, թ, դ, ե, գ, բ, ը, զ, է

77 **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Գործիչը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Սամարիայի գրավումը | 1. | Ք.ա. 449 թ. | 1. | Թիգլաթպալասար III |
| 2. | Բաբելոնի գրավումը ասորեստանցիների կողմից | 2. | Ք.ա. 587 թ. | 2. | Կալիաս |
| 3. | Հույն-պարսկական հաշտության պայմանագրի կնքումը | 3. | Ք.ա. 720 թ. | 3. | Նաբուգոդոնոսոր II |
| 4. | Երուսաղեմի երկրորդ գրավումը բաբելոնյան զորքերի կողմից | 4. | Ք.ա. 729 թ. | 4. | Սարգոն II |
| | | 5. | Ք.ա. 626 թ. | 5. | Նաբոպալասար |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 5 |
| 2 | 1 | 4 |
| 3 | 5 | 3 |
| 4 | 2 | 1 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 4 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 2 | 3 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 3 |
| 2 | 5 | 2 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 3 | 4 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 4 |
| 2 | 1 | 2 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 4 | 5 |

78 **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Գործիչը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Թեհրանը Իրանի մայրաքաղաք հռչակելը | 1. | 1653 թ. | 1. | Լուի Նապոլեոն |
| 2. | Սահմանադրության ընդունումն Անգլիայում անկախականների կողմից | 2. | 1775 թ. | 2. | Աղա Մոհամմադ խան |
| 3. | Ազատ ձեռներեցության մասին օրենքի ընդունումը Ռուսաստանում | 3. | 1852 թ. | 3. | Օ. Կրոմվել |
| 4. | Կայսրության վերականգնումը Ֆրանսիայում | 4. | 1795 թ. | 4. | Եկատերինա II |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 3 | 2 |
| 2 | 2 | 1 |
| 3 | 4 | 3 |
| 4 | 1 | 4 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| 2 | 4 | 1 |
| 3 | 1 | 3 |
| 4 | 3 | 2 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 2 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 2 | 4 |
| 4 | 3 | 1 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 1 |
| 2 | 3 | 4 |
| 3 | 1 | 3 |
| 4 | 4 | 2 |

79 **Մշակույթի գործիչներին համապատասխանեցնել արվեստի ուղղությունների հետ.**

1. Օ. դը Բալզակ
2. Է. Դեգա
3. Մ. Կարավաջո
4. Ֆ. Շոպեն
5. Ժ. Լուի Դավիդ
6. Է. Զոլա

ա. բարոկկո
բ. սիմվոլիզմ
գ. ռեալիզմ
դ. իմպրեսիոնիզմ
ե. նատուրալիզմ
զ. կլասիցիզմ
է. ռոմանտիզմ

1) 1-բ, 2-է, 3-ե, 4-դ, 5-ա, 6-գ
2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա, 5-է, 6-զ
3) 1-ա, 2- զ, 3-է, 4-բ, 5-գ, 6-դ
4) 1-գ, 2-դ, 3-ա, 4-է, 5-զ, 6-ե

80 **Կատարել համապատասխանեցում.**

| # | Իրադարձությունը | # | Տարեթիվը | # | Վայրը |
|---|---|---|---|---|---|
| 1. | Սուդեթական մարզը Գերմանիային հանձնելու համաձայնագիրը | 1. | 1941 թ. | 1. | Նորմանդիա |
| 2. | Երկրորդ ճակատի բացումը Եվրոպայում | 2. | 1942թ. | 2. | Պիրլ Հարբոր |
| 3. | Ճապոնական օդուժի հարձակումն ամերիկյան ռազմածովային հենակայանի վրա | 3. | 1944թ. | 3. | Վաշինգտոն |
| 4. | Միավորված ազգերի հռչակագրի ստորագրումը | 4. | 1938թ. | 4. | Լոնդոն |
| | | 5. | 1939 թ. | 5. | Մյունխեն |

1)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 2 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 5 | 4 |
| 4 | 2 | 3 |

2)

| | | |
|---|---|---|
| 1 | 2 | 4 |
| 2 | 1 | 3 |
| 3 | 4 | 1 |
| 4 | 2 | 5 |

3)

| | | |
|---|---|---|
| 1 | 4 | 5 |
| 2 | 3 | 1 |
| 3 | 1 | 2 |
| 4 | 2 | 3 |

4)

| | | |
|---|---|---|
| 1 | 1 | 4 |
| 2 | 5 | 3 |
| 3 | 2 | 1 |
| 4 | 3 | 2 |

.